

Ընդհանուր Ծառայություններու Գնումի Ապահովագրութեան Տեղեկագիր

Ֆրէնք Տ. Լէնթըրմէնի Շրջանային Կեդրոնը ծառայություններ եւ հոգատարություններ կրնայ գնել թերաճ երեխաներու եւ չափահասներու կամ երեք տարեկանէն վար փոքրերու որոնք ունին վիճակներ որ իրենց թերաճութիւնը վտանգի տակ կը դնէ երբ նման ծառայություններ եւ հոգատարություններ կրնան:

1. Արգիլել կամ թեթեւցնել թերաճութիւնը
2. Արգիլել երեխայի մը տեղահանութիւնը իր տունէն կամ չափահասի մը տեղահանութիւնը իր տունէն կամ գաղութէն:
3. Թոյլատրել անհատին որ մօտաւորապէս ունենայ նոյն տարիքի ոչ թերաճի մը նման ամէնօրեայ ապրելու ձեւ, գաղութի մէջ ունենայ արդիւնաբեր եւ բնականոն կեանք, կամ թոյլ տայ ոչ թերաճներու հետ ունենայ դրական եւ իմաստալի յարաբերութիւններ: (Welfare & Institutions Code §§ 4501, 4502, 4646, subd. (a), 4648, subd. (b).)

Ծառայություններու եւ հոգատարություններու որոշումը որոնք կենսական են անհատին պէտք է ըլլան Անձին Անհատական Ծրագրին/Անհատական Ընտանիքի Ծառայութեան Ծրագրին (IPP/IFSP) ընթացքին: Որոշումը պէտք է ըլլայ անհատին կամ իր ընտանիքին նախընտրություններուն եւ կարիքներուն հիման վրայ եւ պէտք է ունենայ կարգ մը ծառայություններու տարբեր ընտրություններ, առաջարկուած ԱԱԾ/ԱԸԾՄ մասնակցողներէն եւ ամէն մէկ ազդու-ծախսի (cost-effectiveness) ընտրութիւնը համաձայնի նշուած ԱԱԾ/ԱԸԾՄ նպատակներուն մէջ: (Welfare & Institutions Code 4512, subd. (b).)

Երեք տարեկանէն վար երեխաներու, բացի բժշկական տոկուն մեքենաներու, Շրջանային Վարչութիւնը կրնայ միայն գնել ծառայություններ եւ հոգատարություններ որոնք պահանջուած են Դաշնակցային Վաղ Միջամտութեան Ծառայություններու Որոշումէ (Federal Early Intervention Services Act.)

Գործածութիւն Հասարակ Աղբիւրներու

Նախ քան ծառայութիւն մը գնելը, Շրջանային Կեդրոնը պէտք է հետապնդէ բոլոր միւս օգտագործելի աղբիւրները կամ յատկազումարը ինչպէս նաեւ անհատի մը կամաւոր ծառայություններու եւ հոգատարություններու նախատեսութիւնը, զորօրինակ ընտանիքի, բարեկամներու եւ պաշտօնակիցներու բնական հոգատարութիւնը: Շրջանային Կեդրոնը պէտք չէ ծառայութիւն մը գնել որ կրնայ ունենալ Մէտի-Քալի, Մէտիքէրի, Առողջական Օրէնսգէտի (the Civilian Health) եւ Բժշկական Միօրինակ Ծառայութեան Ծրագրի, (Medical Program of the Uniform Services (CHAMPUS, Tri-Care) Տան Մէջ Հոգատարութեան Ծառայություններու (IHSS), Քալիֆորնիոյ Երեխաներու Ծառայություններու (California Children's Services), Անձնական ապահովագրութեան, կամ առողջական խնամքի ծառայութեան ծրագրի կողմէ երբ անհատ մը կամ ընտանիք մը իրաւունք կ'ունենայ այս ապահովագրութեան բայց կ'ընտրէ չհետապնդել: Եթէ անհատ մը կամ ընտանիք մը կը փնտռէ ծառայութիւն մը երրորդ վճարողի խմբակէ, շահաւոր ծրագրէ մը կամ ուրիշ առողջական խնամքի ծառայութեան ծրագրէ մը եւ կը մերժուի ծառայութիւնը, Շրջանային Կեդրոնը պէտք չէ որ գնէ ծառայութիւնը մինչեւ որ անհատը կամ ընտանիքը ցոյց տան մերժումի փաստագրութիւն եւ Շրջանային Կեդրոնը կ'որոշէ որ մերժումի վերաքննութիւնը արդիւնք չունի:

Եթէ որոշուած է որ ուրիշ գործատեղի մը կամ անհատ մը պէտք է պատասխանատու ըլլայ գնելու կամ հայթայթելու ծառայութիւն մը, Շրջանային Կեդրոնը պիտի օգնէ անհատին եւ ընտանիքին ստանալու պէտք ունեցած ծառայութիւնը: Մինչ այդ որ Շրջանային Կեդրոնը կը հետապնդէ ուրիշ գործատեղիէ կամ անհատէ յատկազումար մը, կրնայ անմիջականօրէն գնել պէտք եղած ծառայությունները եւ հոգատարությունները մինչեւ որ այդ գործատեղին կամ անհատը գնէ կամ հայթայթէ ծառայությունները եւ հոգատարությունները: Ուել օտացուած յետազոտեցիկ յատկազումար ուրիշ գործատեղիէ կամ անհատէ պէտք է յատկացուի Շրջանային Կեդրոնի կատարած վճարումի փոխարէն այն ընթացքին երբ նման ծառայութիւն կամ հոգատարութիւն կը հետապնդուէր: (Welfare & Institutions Code §§ 4648, subd. (a)(8), 4659, 4685, subd. ©(6) and 4791, subd. © and (h)(1)(A), Family Code) §§ 3900 and 3910.)

Ծնողքի Պատասխանատուություն

Հաստատելով կրտսեր անհատի մը ծառայություններու եւ հոգատարություններու Կարիքները, Շրջանային Կեդրոնը պէտք է նկատի առնէ ծնողներուն պատասխանատուութիւնը հայթայթելու կրտսեր անհատին ինչպէս որ պիտի ընէին ոչ թերաճ կրտսերի մը: Կրտսեր մը որ տունէն դուրս կը բնակի, Շրջանային Կեդրոնը պէտք է դիմէ ծնողներուն իրենց ծախսի բաժինը վճարելու կրտսերին խնամքին: (Welfare & Institutions Code §§ 4659, 4685, subd. (c)(6), 4782 and 4784, Family Code §§ 3900.)

Ծնողքերուն Միջառութիւնը Ծառայութիւններուն Մէջ

Նկատի առնելով ծնողներու մասնակցութեան խիստ կարեւորութիւնը կրտսերին բուժական միջամտութեան յաջողութեանը, ծնողները որոնք կը ստանան այսպիսի ծառայութիւններ իրենցմէ կը սպասուի աշխուժօրէն մասնակցիլ իրենց երեխային խնամքին: Այս կը բովանդակէ, նուազագոյնը, մասնակցութիւնը ծրագրի պատրաստութեան, կանոնաւոր նիստերու մասնակցութիւնը դիւրացուած հայթայթողին կողմէ, եւ միջամտութեան արհեստագիտութեան կատարումը նիստերու միջեւ:

Ծրագրի Զարգացումը (development), Կատարումը (Implementation) եւ Գնարկութիւնը (evaluation)

Ծառայութիւններ եւ հոգատարութիւններ կրնան առնուիլ անհատին պէտքութիւնները ամբողջացնելու որոնք կապ ունին զարգացական անկարողութեան հետ երբ կը կատարելագործեն բոլոր կամ մաս մը անհատին նպատակներէն եւ նպատակէտերէն ԱԱԾ/ԱԼԾԾ մէջ բովանդակուած:

Անհատակնացուած ծրագիրը պէտք է միասին պատրաստուի մէկ կամ աւելի Շրջանային Կեդրոնի ներկայացուցիչներու հետ, ունենալով ծառայութեան գործավարը (service coordinator) թերաճ անհատը, անհատին ծնողը, օրինաւոր խնամակալը, պահպանիչը, երբ յարմար է, եւ ուրիշ անհատի կամ ծնողքի կողմէ հրաւիրուած անհատներ, խնամակալ եւ պահպանիչ: ԱԱԾ/ԱԼԾԾԷն հետեւեալները պահանջուած են՝

- Ամէն մէկ ԱԱԾ/ԱԼԾԾ պէտք է բովանդակէ նպատակներու բովանդակութիւն, կախեալ անհատին կարիքներէն, նախընտրութիւններէն եւ ընտրութիւններէն:
- Ամէն մէկ նպատակ պէտք է կապ ունենայ յատուկ, ժամանակաւոր նպատակէտերէ որոնք պայմանաժամով բացատրուած են որոնք կ'արտօնեն յառաջդիմութեան չափանիշը կամ ծառայութեան բաժանումի հսկումը:
- Նպատակները եւ նպատակէտերը պէտք է առիթներու առաւելագոյնը ընեն անհատին ստեղծելու յարաբերութիւններ, մաս կազմեն գաղութի կեանքի բնակելու պայմանով, գործի, դպրոցի, գուարճանալու, կեանքը իրենք իրենց ուժերով ղեկավարելու կարելիութիւնը, ձեռք ձգեն աւելի ու աւելի դրական դերեր գաղութի կեանքին մէջ եւ զարգացնեն կարողութիւն հետապնդելու նպատակները:
- Ամէն մէկ ծառայութիւն եւ հոգատարութիւն պէտք է հաստատուի ԱԱԾ/ԱԼԾԾի մէջ եւ պէտք է մաս կազմէ մէկ կամ աւելի նպատակէտերէ նշանակուած անհատին համար:
- ԱԱԾ/ԱԼԾԾ պէտք է մանրամասնէ ամէն մէկ ծառայութեան տեսակը եւ քանակը եւ Շրջանային Կեդրոնէն գնուելիք հոգատարութիւնները կամ ստացուած ուրիշ աղբիւրներէ եւ պէտք է հաստատէ ծառայութեան պատասխանատու հայթայթողներու ամէն մէկ նպատակակէտերը:
- Կարելի եղածին չափ, ծառայութիւնները եւ հոգատարութիւնները պէտք է մշակոյթային առումով յարմար ըլլան, խառնուին գաղութի կեանքին մէջ, եւ յառաջացնեն անհատի եւ ընտանիքի իրաւասութիւնը:
- Կանոնաւոր վերաքննութիւն եւ գնարկում պէտք է ըլլան ԱԱԾ/ԱԼԾԾին որոշելու եթէ ծրագրուած ծառայութիւնները հայթայթուած են, եթէ նպատակէտերը յաջողած են նշանակուած ժամանակի ընթացքին, եւ եթէ անհատը եւ իր ընտանիքը գոհացած են ԱԱԾ/ԱԼԾԾիով եւ իր կատարումով: (Welfare & Institutions Code §§ 4512, subd. (b), 4640.7 4646, 4646.5, 4648 and 4750.)

Ծարունակելի Հիմնադրամ

Ծարունակելի ծառայութեան եւ հոգատարութեան հիմնադրամ կարելի է վաւերացնել եթէ անհատը, անհատին ծնողքը, օրինաւոր խնամակալը կամ խնամակալը, եւ Երջանային Կեդրոնը կը համաձայնին որ բանաւոր յառաջացում եղած է անհատին ԱԱԾ/ԱԸԾԾի նպատակներուն: (Welfare & Institutions Code §§ 4648, 4651, 4685.)

Ընտրել Ծառայութիւն Հայթայթող մը

Ծառայութիւններ եւ հոգատարութիւններ կրնայ գնուիլ միայն հայթայթողներէ որոնք արձանանագրուած ծախողներ են կամ վաւերացուած են Բաժանումի Զարգացած Ծառայութեան (ԲԶԾ) (Department of Developmental Services) կողմէ հայթայթելու նման ծառայութիւններ եւ հոգատարութիւններ: Հայթայթողները պէտք է նաեւ՝

- Ունենան հայթայթողներու սահմանուած վճառում կամ պայմանաւորուած ծառայութիւններ հայթայթուած (ԲԶԾ)էն
- Նախորօք արտօնութիւն առաքուած է Երջանային Կեդրոնէն գնելու յատուկ ծառայութիւն համապատասխան անհատին
- Յարիլ խնամքի որակի չափանիշի ճշդուած Երջանային Կեդրոնի կողմէ, (ԲԶԾ)էն, Welfare & Institutions Code-էն եւ California Code of Regulations-էն հայթայթուած ծառայութեան եւ հոգատարութեան համար:

Երջանային Կեդրոնը պէտք է նկատի առնէ հետեւեալը երբ կ'ընտէ հայթայթող մը անհատի ծառայութիւններու եւ հոգատարութիւններու՝

- Հայթայթողին ծառայութիւններ եւ հոգատարութիւններ տալու կարողութիւնը որ պիտի կատարելագործէ մանրամասնուած ԱԱԾ/ԱԸԾԾի նպատակէտը
- Հայթայթողին ծառայութիւններ տալու կարողութիւնը որոնք նորաձեւական եւ ազդեցիկ-արժէք են
- Հայթայթողին արդիւնքը ԱԱԾ/ԱԸԾԾի նպատակներու յաջողութեան
- Հայթայթողին կարողութիւնը առաջացնելու եւ դիրացնելու ծառայութիւններ բնական միջավայրի մէջ բնական հոգատարութիւններու հետ
- Հայթայթողին կարողութիւնը իրաւասութիւն տալու անհատներու եւ իրենց ընտանիքներուն որոշումներ ընելու իրենց կեանքին մէջ, ուր եւ ինչպէս ապրիլ, գաղութի մէջ իրենց յարաբերութիւնը ժողովուրդի հետ, եւ ինչպէս իրենց ժամանակը կ'անցնեն, իրենց կրթութիւնը, աշխատանքը եւ գումարնութիւնը
- Հայթայթողին կարողութիւնը կատարելու ծառայութիւններ եւ հոգատարութիւններ՝ որոնք աւելի արդիւնք կ'ունենան անկախ, արդիւնաբեր եւ բնականոն կեանք տալու անհատին
- Հայթայթողին ցոյց տուած ենթարկումը ուզելու անհատին ծնողքէն՝ լիովին մասնակցութիւն ծառայութեան ծրագրի զարգացման եւ կատարումին
- Երբ յարմար է, հայթայթողին վարկաւորման յաջողութիւնը, հրամանագիրին, կամ արուստաւորի վկայագրի

Գնել Ամենէն Յարմար Գինով Ծառայութիւն

Եթէ բաղդատելի որակաւոր ծառայութիւններ կան տարբեր հայթայթողներէ որոնք հաւասարապէս կրնան կատարաւագործել բոլոր կամ մաս մը անհատին ԱԱԾ/ԱԸԾԾիին, ամենէն յարմար գինով ծառայութիւնները պէտք է ընտրուին: Ծախսը պէտք է բովանդակէ թէ ծառայութեան եւ փոխադրութեան ծախսերը: Որոշելով ծախսը, կառավարական (federal) տնտեսական մասնակցութեան օգտակարութիւնը պէտք է նկատի առնել: Անհատէն պէտք չէ պահանջուի գործածելու ամենէն յարմար գինով հայթայթողը եթէ պիտի պահանջուի որ փոխադրուի աւելի սահմանափակիչ կամ աւելի քիչ ներգրաւուած ծառայութեան կամ հոգատարութեան:

Գնել Չփաստուած Ծառայութիւն

Շրջանային Կեդրոնը պէտք չէ գնէ փոռձարական դարմանում, բուժական ծառայութիւններ, կամ հնարքներ որոնք բժշկականօրէն կամ գիտականօրէն որոշուած չեն որ գործօն կամ ապահով կրնան ըլլալ, որոնց վտանգները եւ դժուարութիւնները անձանօթ են, կամ որոնք համարուած են ճանչուած արուեստաւորներէ թէ կարողականօրէն վնասակար են անհատին:

Փոռձարական դարմանում կամ բուժական ծառայութիւններ կը բովանդակեն փոռձարական բժշկութիւն կամ սննդական բուժում երբ այդ ապրանքի գործածութեան նպատակը ընդհանուր բժշկական գործունէութիւն չէ:

Հաւասար Պաշտպանութիւն

Թերաճ անհատները ունին նոյն հաստատուած օրինական իրաւունքներ եւ պատասխանատուութիւններ ուրիշ անհատներու նման Սահմանադրութեան քով եւ գործադրելի օրէնքներ՝ Միացեալ Նահանգներու եւ Քալիֆորնիոյ: Ծառայութիւնները պէտք է գնուին ընտրելի անհատներուն առանց նկատումի ցեղի, գոյնի, հանգանակի, ազգային ծագումի, քաղաքացիութեան, սեռի, տարիքի կամ ֆիզիքական կամ մտային վիճակին անկարողութեան: Որեւէ այլ որակեալ անհատ մը, զարգացման խանգարումի պատճառով, պէտք է մասնակցութեանէ զրկուի, մերժուի օգտուելէ կամ ենթարկուի խտրականութեան՝ ուեւէ ծրագրի կամ գործունէութեանէ որոնք կը ստանան հանրային յատկագումար:

(Welfare & Institutions Code § 4502.)

Այս ապահովագրի տեղեկագիրը միասին պէտք է նկատուի յատուկ ծառայութեան գնումի չափանիշի հետ որ որդեգրուած է Շրջանային Կեդրոնէն ամէն մէկ տեսակի ծառայութեան համար: Այս չափանիշներու մէջ նշուած ծառայութիւններու տեսակները բոլորը մէջը չեն հաշուուած: Անհատական պարագաներ վերաբերեալ զարգացման խանգարումի կրնայ արտօնել յաւելուած ծառայութիւններ նախ ապէս չհաստատուած: Բացառութիւններ Ծառայութեան Գնումի Չափանիշի ուղղեցոյցներու, ծառայութեան տեսակներու կամ յատուկ չափանիշներու իւրաքանչիւր տեսակի ծառայութեան կրնայ ըլլալ երբ անհատին պէտքութիւնները նկատի կ'առնուին: Ուեւէ նման բացառութիւն պէտք է վերաքննուի շրջանային կեդրոնի գործադիր տնօրէնի կամ խորհրդատուի կողմէ:

Ծառայութեան Մերժում

Եթէ Շրջանային Կեդրոնը մերժէ ուեւէ ծառայութիւններ կամ որոշէ կեցնել ներկայ ծառայութիւնները, անհատը, կամ իր ներկայացուցիչը կրնան վերաքննութեան դիմել առաջարկուած որոշումը խնդրելով արդար ունկնդրութիւն: Անհատի ծառայութեան գործավարը կրնայ հայթայթել յաւելուած տեղեկութիւն եւ օգնութիւն: